N.K. BAGHDASARYAN

THE ESSENCE AND NATURE OF THE ETHNO-POLITICAL CONFLICT

The essence of the ethnic conflict, its growing influence on the world politics in modern times are discussed. Using the example of the Artsakh conflict, interethnic conflicts are touched upon, the reasons for their occurrence are discussed.

Keywords: conflictology, national conflict, separatist tendencies, national relations, political conflict, ethnic conflicts, international structures, national identity.

ՀՏԴ 329(479.25)

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ /1908-1914թթ./

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցություններից Հնչակյան կուսակցության կազմակերպական կառույցները Կիլիկիայում Եղեռնի նախօրեին /1908-1914թթ./, ինչի հիմքով հնարավոր է վերլուծել արևմտահայության շրջանում նրանց ներկայացվածությունն ու գործունեության արդյունավետությունը:

Առանցքային բառեր. կոմիտե, մասնաճյուղ, վարիչ մարմին, կուսակցության անդամ, համագործակցություն, կազմակերպական մարմիններ:

Հնչակյան կուսակցության Կիլիկյան կազմակերպական կառույցների /1908-1914 թթ./ ուսումնասիրության նպատակը Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության մեզ այդ կուսակցության ներկայացվածության իրական պատկերի և հայերի ինքնապաշտպանության ուղղությամբ ընդունված որոշումների կատարման ընթացքի հետազոտությունն ու ներկայացումն է:

Հիշյալ ժամանակաշրջանում Կիլիկիայում գործում էին երեք կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Սահմանադիր ռամկավար կուսակցությունը (1908 թ. Ալեքսանդրիայում վերակազմյալ հնչակյանների և արմենական կուսակցության միավորմամբ ձևավորված):

Փորձ է արվում ցույց տալ տարբեր շրջաններում կուսակցության ներկայացվածության աստիճանը՝ կուսակցության կառույցների պատկերը Կիլիկիայում, մասնավորապես Հաճնում:

Սահմանադրական շրջանում Հաճնում էին գտնվում հնչակյան տեղի մասնաճյուղի անդամները, որոնք նախատեսում էին դիմադրական ներքին աշխատանքներ: 1915 թ. ջարդերի նախօրեին տեղում կազմակերպվեց դիմադրություն՝

Տեր Ներսես եպիսկոպոս Դանիելյանի գլխավորությամբ: Մեր համոզմամբ՝ տեղում մասնաճյուղը նախօրոք լուրջ կազմակերպական կառույցներ չէր ստեղծել, ուստի մի քանի գործիչների ձերբակալությունից հետո որևէ քայլ չիրականացվեց [1]:

Մյուս վայրը, որտեղ կուսակցությունը կարողացավ իր կառույցները գործի դնել, Զեյթունն էր: Այստեղ ներքին միասնականության բացակայությունն էապես խանգարեց: Չնայած այդ հանգամանքին՝ կուսակցության արմատներն այստեղ ավելի խորն էին: Բայց Զեյթունում կուսակցությունն այդպես էլ չկարողացավ ներքին կայունություն ապահովել: Իսկ արդեն 1915 թ. բախտորոշ շրջանում հենց այդ միասնականության բացակայությամբ ինքնապաշտպանությունն էական արդյունքներ չգրանցեց: Տեղի հոգևոր առաջնորդի և հնչակյանների միջև ընդհանուր համաձայնություն չկայացավ, և հնչակյանները Փանոս Չագըրյանի գլխավորությամբ բարձրացան լեռները՝ թուրքական բանակին այնտեղից դիմադրելու: Այսուհանդերձ, պետք է նկատել կուսակցության բացթողումները այս շրջանում. այն փաստորեն այնքան ազդեցություն և կշիռ չուներ՝ տեղում ուժերը վերադասավորելու և դրանք արդյունավետ ավարտին հասցնելու համար: Թերևս նման պարագայում Զեյթունում այդքան մեծ թվով անպաշտպան մնացած մարդիկ չէին կոտորվի:

Այսպես ուշագրավ ձևակերպում ունի Ս. Սապահ-Գիլյանը, երբ փորձում է վերհանել հայ ազատագրական շարժման ձախողման պատասխանատուներին. «Հայաստանի և Հայ Ազգի փրկութեան գործի մեջ Ընդհանուր համագործակցութիւն՛ ահա՛ ժամանակի պահանջը: Մենք բոլորս էլ պատմական պատասխանատուութեան առաջ ենք գտնվում ուրեմն և՝ հրամայական պարտականութիւն ունինք կատարելիք… դատը, գործը ամբողջինն է, Հայ ամբողջութիւնն էլ առաջ պիտի գայ և գործի գլուխ անցնի իւրաքանչիւր իր չափու կարողութեամբ» [2]:

Հնչակյան կառույցների թվում իրենց որոշակի դերն են ունեցել ուսանողական միությունները: Առաջին հայացքից թվում է՝ պետք է քարոզչական գործունեությամբ և կուսակցության գաղափարների տարածմամբ զբաղվեին, բայց Մեծ եղեռնի նախօրեին կազմակերպչական բնույթի աշխատանքներ իրականացրին:

Սեբաստիայում (այստեղ կազմակերպական քայլերը սկսվել էին դեռևս 1910 թ.՝ ի դեմս վերաքննիչ հանձնաժողովի, որը պիտի զբաղվեր զինման խնդիրներով), Տրապիզոնում և Տիգրանակերտում ուսանողական միության ներկայացուցիչները փորձել են տեղերում անպաշտպան հայությանը համախմբել և դիմադրություն կազմակերպել: Այս ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունավետության վերաբերյալ էական տեղեկություններ չկան, բայց այն, որ

ղեկավար ուժերին (Փարամազ-Տիգրանակերտ և Տրապիզոն) ձերբակալելուց հետո էական դիմադրություն չի կազմակերպվել, հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ էական ձեռքբերումներ չեն գրանցվել:

Սեբաստիայում Ներսես Փիլիկյանի նամակներից պարզ է դառնում հնչակյանների գործունեության և տեղում ներկայացվածության աստիճանը: Համաձայն այդ վկայության՝ Փիլիկյանը հրավիրել է ժողով՝ փորձելով տեղում համախոհների թվաքանակը ավելացնել [3]:

1908-1914 թթ. ընթացքում Հնչակյանները, ի տարբերություն Հ.Յ. Դաշնակցությանը, բացասաբար էին տրամադրվել երիտթուրքերի նկատմամբ և զգուշավոր մոտեցում ունեին և չնայած այս մոտեցմանը, այնուամենայնիվ, էական և ամուր նշանակության կառույցների ճանապարհով չգնացին:

Նախ վերլուծենք և անդրադառնանք 1908 թ. Օսմանյան Թուրքիայում ծավալվող դեպքերին և այդ առնչությամբ Հնչակյան կուսակցության դիրքորոշմանը: Կուսակցությունը ողջունեց երկրում հաստատված սահմանադրական ռեժիմը, միաժամանակ հույս ունենալով այդ ռեժիմի օգնությամբ հետզհետե ընդլայնել դեմոկրատական կարգերը:

Այնուամենայնիվ, չնայած այս հայտարարությանը, հնչակյանները երիտթուրքերի նկատմամբ զգուշավոր դիրքորոշում ունեին: Նրանք համագործակցում էին ավելի լիբերալ գործիչ՝ իշխան Սաբբահէդդին հետ: Վերջինս, ի տարբերություն երիտթուրքերի, հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների իրավունքների ընդլայնման և ապակենտրոնացման կոչերով: Կուսակցության դիրքորոշումը հստակեցվում է 1908 թ. նոյեմբերի 24-ին Փարիզից կենտրոնական վարչության մասնաճյուղերին ուղղված շրջաբերականով, որից պարզ է դառնում, որ Սահմանադրության առկայության պայմաններում հայ ժողովուրդը սեպարատիստական (անջատողական) ձգտումներ չունի: Շրջաբերականում նախատեսվում էր նաև «զինել ժողովրդին նոր տեսակի զենքերով, որն անհրաժեշտ է ինքնապաշտպանության համար» [4]:

Ստացվում է, որ հնչակյանները, քաջատեղյակ լինելով երիտթուրքերի ազգայնամոլ էությանը, ի սկզբանէ դրել են արևմտահայության զինման խնդիրը՝ կանխազգալով սպասվող վտանգը: Ինչպես Հ.Յ. Դաշնակցությունը, այնպես էլ Հնչակյաններն ի սկզբանե դնում են իթթիհատին հակադրվելու խնդիր, եթե վերջինս շեղվի իր նախնական նպատակներից: «Մենք որպես սոցիալիստներ դեմ կլինենք Երիտասարդ Թուրքիային, եթե նա ցանկանա մեկ ազգի տիրապետությունը հաստատել մյուսների վրա»:

Հնչակյան կուսակցության նման մոտեցումը ի վերջո վերածվեց պաշտոնական գործունեության ծրագրի, ինչը հաստատվեց կուսակցության Զ ժողովում:

Այստեղ ընդունված որոշումները մեզ համար կարևոր են այնքանով, որքանով խոսվում է կուսակցական կազմակերպական մարմինների անելիքների հստակեցման մասին: Սկզբում ժողովի հրավիրումը հետաձգվում է (նախնականը՝ 1909 թ. ապրիլի սկիզբ), որին հաջորդում է կիլիկիահայության ջարդը: Այնուհետև այն հնարավոր է լինում հրավիրել 1909 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլիսում, որտեղ վերոնշյալ մոտեցման հաստատումից հետո տրվում են այդ մարտավարությանը համապատասխան հրահանգներ: Նշենք նաև, որ այս ժողովից հետո կուսակցությունը ստանում է Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցություն անվանումը:

Կուսակցության համար օժանդակ մարմնի դեր էին կատարում գաղթօջախները, որոնք պետք է իրենց տեղական պայմանները հաշվի առնելով՝ գործեին սոցիալ-դեմոկրատական հիմքով և աջակցեին իրենց շրջանում գործող գաղափարակից կազմակերպություններին՝ հաջողելու համար պրոլետարիատի հաղթանակը: Որոշվեց լեգալացնել կուսակցության գործունեությունը Թուրքիայի տարածքում և պայքարել սահմանադրական-պառլամենտական մեթոդներով:

1912թ. հուլիսի 10-օգոստոսի 8-ին Հնչակյան կուսակցության Տաճկաստանի 2-րդ պատգամավորական ժողովը հաստատում է կուսակցության դիրքորոշման փոփոխությունը և կողմնորոշվում նոր ընդդիմադիր ուժի՝ Իթթիլաֆի հետ դաշնակցային հարաբերությունների հաստատման ճանապարհով [5]: Տեղի են ունենում խորհրդակցություններ, սակայն ի վերջո դրանք հետագայում ավարտվում են անհաջողությամբ: Այդ համագործակցությամբ կուսակցությունը փորձում էր արևմտահայերի խնդրի լուծման ճանապարհ և անվտանգության հնարավոր երաշխիքներ ստեղծել: Այս մոտեցումը, սակայն նոր, բարդություններ առաջացրեց:

Հնչակյան գործիչ Ս. Սապահ-Գուլյանը ներկայացնում է այդ շրջանում կուսակցության կազմակերպական վիճակը և նշում, որ չնայած արդեն հայտնի էր Իթթիհատի հակահայ ծրագիրը, այնուամենայնիվ, որևէ քայլ չէր ձեռնարկվում զենքի ձեռքբերման և ինքնապաշտպանության նախապատրաստման ուղղությամբ:

Այսպիսով, Հնչակյան կուսակցությունը որոշակի քայլեր ձեռնարկեց Կիլիկիայում ներկայացվածության աստիճանը բարձրացնելու նպատակով: Ունենալով զգուշավոր վերաբերմունք երիտթուրքական իշխանությունների նկատմամբ՝ Հնչակյանները Կիլիկիայում իրականացրին կազմակերպական աշխատանքներ՝ ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով: Այդ աշխատանքների արդյունքներն արտացոլվեցին ավելի ուշ Կիլիկիահայության ինքնավարության ձգտումներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Լեփսիուս Յ.** Գաղտնի Տեղեկագիր. Հայաստանի ջարդերը.- Կ.Պոլիս, /տպ. Յ. Ասատուրեան եւ որդիք/, 1919.- 67 էջ:
2. «Հնչակ», 1908, թ.6-7:
3. ՀԱԱ, ֆ. 408, ց. 1 , գ. 92, թ. 2:
4. Յուշարձան նուիրուած Սօցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան քառասնամեակին, էջ 63:
5. **Սապահ-Գիլեան Ս.** Պատասխանատուները.-Պէյրութ, 1974.- էջ 8:

А.С. ТАДЕВОСЯН

ПРЕДСТАВИТЕЛЬСТВО ПАРТИИ “ГНЧАКЯН” В КИЛИКИИ (1908-1914гг.)

Рассматриваются организационные структуры партии **“**Гнчакян” в Киликии накануне Геноцида (1908-1914гг.), на основании чего становится возможным проанализировать их представительство и эффективность их деятельности среди западных армян.

В статье сделана попытка взглянуть на проблему с другой, теоретической точки зрения. Изучается степень представительства партии ‘‘Гнчакян’’ в Киликии в этот период, раскрывается реальная картина потенциальных, географических заявлений и решений в целях самообороны.

Ключевые слова: комитет, филиал, руководящий орган, член партии, сотрудничество, организационные органы.

A.S. TADEVOSYAN

THE REPRESENTATION OF THE HNCHAKIAN PARTY IN CILICIA /1908-1914/

The issue is considered with a new theoretical approach, performing a research checking the activity of the Hnchakyan party in the mentioned period. The purpose of the study of the organizational structures of the Hnchak Party in Cilicia /1908-1914/ is to research and present the real picture of the representation of that party in the Ottoman Empire on the eve of the First World War and the implementation of the decisions made in the direction of self-defense of Armenians.

Keywords: committee, branch, governing body, party member, organizational bodies.